

ԺԴ.00.16 - ՀԱՄԱՃԱՐԱԿԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Համաճարակաբանության առարկան և մեթոդները, ժամանակակից համաճարակաբանության հիմնական խնդիրները:

Վարակիչ հիվանդությունների համաճարակաբանական դասակարգում: Համաճարակային պրոցես, նրա արտահայտման ձևերը, վարակիչ հիվանդությունների սեզոնայնություն, պարբերականություն:

Համաճարակային պրոցեսի շարժիչ ուժերը՝ վարակի աղբյուր, փոխանցման մեխանիզմ, ընկալ օրգանիզմ:

Ջրի, հողի և սննդամթերքի համաճարակաբանական նշանակությունը որպես փոխանցման գործոն և դրանց միջոցով վարակի փոխանցման կանխարգելումը:

Կենդանի փոխանցողների (մոծակներ, լվեր, տզեր, մլակներ, ոջիլներ) կենսաբանական, էկոլոգիական և համաճարակաբանական նշանակությունը և դերը մի շարք վարակիչ հիվանդությունների փոխանցման գործում:

Հասկացություն համաճարակային օջախի մասին, նրա առանձնահատկությունները տարբեր փոխանցման մեխանիզմ ունեցող հիվանդությունների դեպքում, հակահամաճարակային միջոցառումների իրականացումը համաճարակային օջախում:

Ախտահանման տեսակները, մեթոդները, ժամանակակից ախտահանման նյութերը, կիրառման ոլորտը, արդյունավետության որոշումը: Մանրէազերծում, մեթոդները: Խցիկային ախտահանում:

Դեզինսեկցիա, պայքար միջատների դեմ, մեթոդները (ֆիզիկական, քիմիական, կենսաբանական), քիմիական դեզինսեկցիոն միջատասպան նյութերի օգտագործումը և կիրառման ոլորտները:

Դեռատիզացիա, նրա դերը և նշանակությունը զոոնոզ վարակների հակահամաճարակային միջոցառումների կազմակերպման ժամանակ:

Դեռատիզացիայի մեթոդները, կանխարգելման և ոչնչացման միջոցառումները (մեխանիկական, քիմիական, կենսաբանական), քիմիական դեռատիզացիոն նյութեր:

Հատուկ վտանգավոր վարակներ: Հակահամաճարակային միջոցառումների կազմակերպումը հատուկ վտանգավոր վարակների դեպքում (կարանտին, օբսերվացիա, հիվանդների և կոնտակտավորների հաշվառում և դուրս գրում):

Իմունականխարգելման հիմնական դրույթները կառավարվող վարակների ժամանակ: ՀՀ իմունիզացիայի ազգային ծրագիրը, օրացույցը, իմունականխարգելման գործընթացի արդյունավետության գնահատման չափորոշիչները: Պատվաստումների հակացուցումներ, հետպատվաստմային անբարեհաջող դեպքեր: Սառցե շղթա: Պատվաստումներ տուբերկուլյոզի և հեպատիտ B-ի դեմ: Մասնակցություն պատվաստմանը, տեխնիկային, անվտանգ պատվաստման իրականացում:

Կենսաբանական պատրաստուկների տեսակները, պատրաստման մեթոդները, արդյունավետությունը, կիրառման ոլորտները:

Ներհիվանդանոցային (նոզոկոմիալ) վարակների համաճարակաբանական առանձնահատկությունները:

Ներհիվանդանոցային վարակը ծննդատներում: Նորածնի և ծննդաբերի ներհիվանդանոցային վարակների համաճարակաբանական առանձնահատկությունները, ներարգանդային և ներհիվանդանոցային վարակների տարբերակում: Ծանոթացում տեղում իրականացվող կանխարգելիչ և հակահամաճարակային միջոցառումներին: Համաճարակային շղթա, դրա ընդհատման առավել արդյունավետ ուղղությունները:

Տարբեր պրոֆիլի ստացիոնարներում ներհիվանդանոցային վարակների դերը: Ներհիվանդանոցային շտամների առաջացման պատճառները և նրանց շրջանառությունը: Անտիբիոտիկների հանդեպ միկրոօրգանիզմների կայունության առաջացման մեխանիզմները (պլազմիդների դերը): Անտիբիոտիկակայունության որոշման մեթոդների հետ ծանոթացում:

Բուժանձնակազմի մասնագիտական հիվանդություններ, նախնական և պարբերական բժշկական զննություններ, դրա կազմակերպումը և անցկացումը: Ծանոթացում գործող օրենսդրությանը: Համաճարակաբանական

վերահսկողություն, միջոցառումներ բուժանձնակազմի պատահական վնասման դեպքում:

Դիսբակտերիոզ, օրգանիզմի տարբեր բիոտոպերում բնական բիոցենոզների նշանակությունը, կազմը: Դիսբակտերիոզի առաջացման պատճառները, կանխարգելումն ու բուժումը: Արիեստական, մշտական և ժամանակավոր բիոցենոզների դերը դիսբակտերիոզի կանխարգելման գործում:

Ֆեկալ-օռալ մեխանիզմով փոխանցվող աղիքային վարակիչ հիվանդությունների համաճարակաբանական առանձնահատկությունները:

Վիրուսային հեպատիտներ A և E համաճարակաբանական առանձնահատկությունները և կանխարգելումը, հակահամաճարակային միջոցառումների կազմակերպումը օջախում, համաճարակաբանական ցուցումով պատվաստումներ հեպատիտ A-ի դեմ:

Որովայնային տիֆի, պարատիֆեր A և B-ի, շիգելյոզների համաճարակաբանությունը: Վարակակրության տեսակները, հակահամաճարակային միջոցառումների կազմակերպումը օջախում և կանխարգելումը: Դիզենթերիա, համաճարակաբանությունը: Զրային, սննդային և կոնտակտ-կենցաղային փոխանցման ուղիների առանձնահատկությունները:

Խոլերա, համաճարակաբանական առանձնահատկությունները: Հակահամաճարակային միջոցառումների կազմակերպումը օջախում և կանխարգելումը:

Պոլիոմիելիտի համաճարակաբանական առանձնահատկությունները: Հակահամաճարակային միջոցառումները օջախում: Համաճարակաբանական վերահսկողության և մոնիտորինգի կազմակերպում: Պատվաստումներ պոլիոմիելիտի դեմ: Պոլիոմիելիտի վերացման խնդրի արդի համաճարակաբանական իրավիճակը աշխարհում և Հայաստանում:

Էնտերովիրուսային վարակների համաճարակաբանական առանձնահատկությունները: Ռոտավիրուսային գաստրոէնտերիտներ, Կոկսակի վիրուսներ և այլն: Էշերիխիոզներ, Իերսինիոզներ հակահամաճարակային միջոցառումների կազմակերպումը և կանխարգելումը:

Աղիքային զոննոզներ: Բրուցելոզի համաճարակաբանությունը և կանխարգելումը: Սանիտարա-անասնաբուժական համատեղ աշխատանքների կազմակերպումը, մասնագիտական խմբերի ինունականխարգելումը: Տեսաֆիլմի դիտում, քննարկում: Ամեռբիագի և լեպտոսպիրոզի հակահամաճարակային միջոցառումների կազմակերպումը օջախում և կանխարգելումը:

Տարբեր միկրոօրգանիզմներից առաջացած սննդային տոքսիկոլարակների համաճարակաբանությունը:

Սալմոնելոզների համաճարակաբանությունը: Սննդային տոքսիկոինֆեկցիաներ, որոնք առաջանում են պայմանական ախտածին և անաէրոբ միկրոօրգանիզմներից: Բոտուլիզմ, հակահամաճարակային միջոցառումների կազմակերպումը օջախում և կանխարգելումը:

Օդակաթիլային մեխանիզմով փոխանցվող (շնչառական ուղիների) անթրոպոնոզ վարակիչ հիվանդությունների համաճարակաբանական առանձնահատկությունները, կանխարգելման հիմնական ուղղությունները:

Կարմրուկի, կարմրախտի, համաճարակային պարօտիտի, համաճարակաբանական առանձնահատկությունները: Հակահամաճարակային միջոցառումների կազմակերպումը օջախում: Պատվաստումներ կարմրուկի, կարմրախտի, համաճարակային պարօտիտի դեմ՝ համաձայն ՀՀ ազգային օրացույցի:

Գրիպի, թռչնագրիպի, ատիպիկ թոքաբորբի և այլն համաճարակաբանությունը և կանխարգելման հիմնական ուղղությունները: Գրիպի համաճարակները և պանդեմիաները, նրա սոցիալ-տնտեսական նշանակությունը:

Քուբեշի և մենինգոկոկային վարակների համաճարակաբանական առանձնահատկությունները, հակահամաճարակային միջոցառումների կազմակերպումը օջախում և կանխարգելումը: Ծանոթացում բակտերիոլոգիական լաբորատորիայի աշխատանքների հետ: Աշխատանք լաբորատորիայում՝ վերին շնչուղիներից քսուկների նմուշառում, ցանքերի կատարում համապատասխան միջավայրերի վրա: Բնական ծաղիկ, ջրծաղիկ, համաճարակաբանությունը, կանխարգելումը, հակահամաճարակային միջոցառումները բնական ծաղիկի օջախում (կարանտին, օբսերվացիա, հիվանդների և կոնտակտավորների հաշվառում և դուրս գրում):

Դիֆթերիայի, ՀԻԲ վարակների և կապույտ հազի համաճարակաբանությունը և կանխարգելումը: Ձեռնարկվող հակահամաճարակային համալիր միջոցառումները: Պատվաստումներ դիֆտերիայի և կապույտ հազի դեմ՝ համաձայն ՀՀ ազգային օրացույցի:

Տրանսմիսիվ փոխանցման մեխանիզմով արյունային վարակիչ հիվանդությունների համաճարակաբանական առանձնահատկությունները:

Մալարիայի համաճարակաբանական առանձնահատկությունները և արդի իրավիճակը Հայաստանում: Հակահամաճարակային միջոցառումների կազմակերպումը մալարիայի օջախում (միջոցառումներ վարակի աղբյուրի, կենդանի փոխանցողների նկատմամբ), քիմիոպրոֆիլակտիկա: Համաճարակաբանական մոնիթորինգ և հսկողություն:

Բժավոր տիֆի և ոչլային հետադարձ տիֆի համաճարակաբանությունը և կանխարգելումը: Հագուստի, գլխի և ցայքի ոջիլների համաճարակաբանական նշանակությունը: Հակահամաճարակային միջոցառումների կազմակերպումը օջախում՝ վարակի աղբյուրի, փոխանցողների և ընկալ օրգանիզմի նկատմամբ: Կոնտակտավորների սանիտարական մշակում միջատասպան նյութերով:

Ուսմունք բնական օջախային վարակների մասին: Էպիզոոտիկ պրոցեսում հարուցիչի փոխանցման մեխանիզմի տեսակները՝ տրանսմիսիվ և ոչ տրանսմիսիվ զոոնոզներ:

Տուլարեմիայի համաճարակաբանությունը և կանխարգելումը: Կրծողների համաճարակաբանական նշանակությունը, վարակի փոխանցման մեխանիզմը և ուղիները, հակահամաճարակային միջոցառումների կազմակերպումը օջախում, իմունապրոֆիլակտիկա: Համաճարակաբանական մոնիթորինգ և հսկողություն:

ժանտախտի համաճարակաբանական առանձնահատկությունները, հակահամաճարակային միջոցառումների կազմակերպումը օջախում և կանխարգելումը (կարանտին, օբսերվացիա, հիվանդների և կոնտակտավորների հաշվառում և դուրս գրում):

Տզային հետադարձ տիֆի և մլակային տենդի համաճարակաբանությունը և կանխարգելումը: Հակահամաճարակային միջոցառումների կազմակերպումը

օջախում: Կոնտակտային մեխանիզմով փոխանցվող արտաքին ծածկույթների վարակիչ հիվանդությունների համաճարակաբանական առանձնահատկությունները:

Վիրուսային հեպատիտներ B, C, D-ի համաճարակաբանությունը և կանխարգելումը: Վիրուսակրության տեսակները, ռիսկի խմբերը, պատվաստումներ հեպատիտ B-ի դեմ: Հակահամաճարակային միջոցառումների կազմակերպումը օջախում: Համաճարակաբանական մոնիթորինգ և հսկողություն:

ՁԻԱՀ-ի, ՄԻԱՎ-ի համաճարակաբանական առանձնահատկությունները և հակահամաճարակային միջոցառումների կազմակերպումը: Համաճարակաբանական մոնիթորինգ և հսկողություն:

Սիբիրյան խոցի համաճարակաբանությունը և կանխարգելումը: Հակահամաճարակային միջոցառումների կազմակերպումը օջախում: Համաճարակաբանական մոնիթորինգ և հսկողություն զոոնոզ վարակների կանխարգելման հարցում:

Լեյշմանիոզների համաճարակաբանական առանձնահատկությունները և արդի իրավիճակը Հայաստանում: Մաշկային և ընդերային լեյշմանիոզների համաճարակաբանությունը և պայքարի միջոցառումները:

Կատաղություն, համաճարակաբանությունը, վայրի և տնային կենդանիների, թափառող շների համաճարակաբանական նշանակությունը: Համաճարակաբանական հսկողության կազմակերպումը: Պատվաստումներ կատաղության դեմ: Ցուցումներ հակակատաղության պատվաստանյութի և գամմա գլոբուլինի կատարման համար:

Փայտացման և գազային գանգրենայի համաճարակաբանությունը և կանխարգելումը: Վարակի աղբյուր, փոխանցման մեխանիզմ: Կանխարգելիչ պատվաստումների կատարումը փայտացման դեմ, հակափայտացման շիճուկի օգտագործումը պասիվ անընկալության և բուժման նպատակով: Հատուկ վտանգավոր վիրուսային հեմոռագիկ տենդերի համաճարակաբանություն և էկոլոգիա: Հակահամաճարակային միջոցառումների կազմակերպումը:

Ոչ վարակիչ համաճարակաբանության ներածություն, համաճարակաբանական սկզբունքները, առանցքային հասկացողությունները, սահմանումները համաճարակաբանության մեջ:

Դեպքերի սահմանումներ, ստանդարտ դեպքի սահմանման կառուցվածքը, հասկացության զգայունության և սպեցիֆիկության մասին, դեպքերի եռաստիճան սահմանում (կասկածելի, հավանական, հաստատված):

Համաճարակաբանական հետազոտության կազմակերպումը, կառուցվածքը՝ նկարագրական և վերլուծական համաճարակաբանական հետազոտություններ (խաչաձև, կոհորտային, դեպք-հսկողություն հետազոտություններ): Հարցաթերթիկների նախագծում, գնահատում, հավաքվող փոփոխականները, փորձարկումը, խնդիրները: Աղետների բժշկություն:

Սիրտ-անոթային համակարգի հիվանդությունների համաճարակաբանական առանձնահատկությունները, ռիսկի խմբերը, գործոնները, հիվանդացություն, մահացություն, կանխարգելման հիմնական ուղղությունները:

Ուռուցքային հիվանդությունների, շաքարային դիաբետի և ճարպակալման համաճարակաբանական առանձնահատկությունները, ռիսկի խմբերը, գործոնները, հիվանդացություն, մահացություն, կանխարգելման հիմնական ուղղությունները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հիմնական

1. Ա.Ձ. Համբարձումյան, Հ.Ս. Հովհաննիսյան, Մ.Մ. Տեր-Ստեփանյան «Ընդհանուր համաճարակաբանություն», Ընդհանուր բժշկության ֆակուլտետի բակալավրիատի ուսումնական ձեռնարկ, Ե. 2013, 150 էջ:
2. Կ.Մ. Դեղձունյան, Ա.Ձ. Համբարձումյան «Համաճարակաբանություն», Երևան, 1999, էջ 366:
3. Б.Л.Черкасский. "Общая эпидемиология", Москва, 2002.
4. Б.Л.Черкасский. "Частная эпидемиология", т.1, Москва, 2002.
5. Б.Л.Черкасский. "Частная эпидемиология", т.2, Москва, 2002.
6. В.И.Покровский, С.Г.Пак, Н.И.Брико, Б.К.Данилкин "Инфекционные болезни и эпидемиология", Москва, 2004.

7. С.С.Бондарчук “Основы практической биостатистики”, изд. Томс. Пед. Университета, 2009.
8. Oleckno, William Anton.” Essential epidemiology: principles and applications”, 2002.

Լրացուցիչ

1. В.В.Власов “Эпидемиология” уч. Пособие ГЭОТАР-МЕД 2004.
2. Л.Ч.Зуева , Ч.И. Сухомлина ”Эпидемиология ”, 2005.
3. Armenian, Haroutune K.” The case-control method: design and applications”, 2009.